

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀՕԳՈՒՏ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ Ն _____

(Ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի հետ կնքվող, բազմաբաժնային)

Ք. _____

« ____ » _____ թ.

«ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «ԲԱՆԿ», ի դեմս Գլխավոր տնօրենի՝ Ա.Շ.Խանդկարյանի, որը գործում է Բանկի կանոնադրության համաձայն (եթե մասնաձեռն է, նշել մասնաձեռնի կառավարչի անունը ազգանունը, որը գործում է մասնաձեռնի կանոնադրության և բանկի Գլխավոր տնօրենի _____ թվականի թիվ _____ լիազորագրի հիման վրա), մի կողմից, և անուն, հայրանուն, ազգանուն, նշել պետության անվանումը անձնագրի սերիա համար տրված ում կողմից, երբ) հաշվառման հասցեն՝ նշել անձնագրում նշված հաշվառման հասցեն թվերով՝ փակագծերում նաև բառերով այսուհետ՝ «ԱՎԱՆԴԱՏՈՒՐ», մյուս կողմից, երկուստեք նաև «ԿՈՂՄԵՐ», կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. ԲԱՆԿՆ _____ ԱՎԱՆԴԱՏՈՒՐԻՑ՝ _____ հոգուս

(երրորդ անձի անուն ազգանուն, հայրանուն, անձնագրի կամ ծննդյան վկայականի տվյալներ սերիա համար երբ և ում կողմից է տրված), հետագայում «ԵՐՐՈՐԴ ԱՆՁ», _____ ժամկետով՝ մինչև « ____ » _____ 20__ թ., տարեկան _____ (_____)%, պարզ տոկոսադրույքի չափով, որպես ավանդ ընդունում է _____ (_____) (ավանդի գումարը նշել թվերով և բառերով, նշել ավանդի արժույթը) գումար (այսուհետ՝ Ավանդ), և պարտավորվում է ԱՎԱՆԴԱՏՈՒՐԻՆ կամ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻՆ (այսուհետ՝ ԱՎԱՆԴԱՏՈՒՐ) վերադարձնել Ավանդը և Պայմանագրով նախատեսված պայմաններով ու կարգով տոկոսներ վճարել դրանից:

- 1.2. Ավանդի դիմաց տոկոսներն հաշվեգրվում են Ավանդը ԲԱՆԿ մուտք լինելուն հաջորդ օրվանից մինչև այն Պայմանագրով ԱՎԱՆԴԱՏՈՒՐԻՆ վերադարձնելու կամ ԱՎԱՆԴԱՏՈՒՐԻ հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
- 1.3. ԲԱՆԿԸ տոկոսների հաշվարկն իրականացնում է Ավանդի ամբողջ գումարի նկատմամբ, Պայմանագրի ողջ ժամկետի համար՝ օրական կտրվածքով: Ընդ որում, ԲԱՆԿԸ յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է 1.1. կետում սահմանված տոկոսադրույքի առնվազն 1/365 հարաբերակցությամբ (իսկ նահանջ տարվա համար ԲԱՆԿԸ օգտագործում է 1/366 հարաբերակցությունը):
- 1.4. Հարկային պահումից հետո, Ավանդի դիմաց ՀՀ դրամով հաշվեգրված տոկոսները, Ավանդի գումարին չեն ավելանում, վճարվում են յուրաքանչյուր ամսվա _____-ին, Ավանդը մուտքագրելու հաջորդ ամսվանից սկսած:
- 1.5. Պայմանագրի գործողության ընթացքում ԱՎԱՆԴԱՏՈՒՐ չի կարող ավելացնել Ավանդի գումարի չափը:
- 1.6. Պայմանագրով սահմանված ժամկետից շուտ ԱՎԱՆԴԱՏՈՒՐԻ կողմից Ավանդը հետ պահանջելու դեպքում, ԲԱՆԿԸ՝ Պայմանագրով սահմանված տարեկան պարզ տոկոսադրույքի փոխարեն ԱՎԱՆԴԱՏՈՒՐԻՆ վճարում է տարեկան _____ (_____) % տոկոսադրույքով՝ կատարելով վերահաշվարկ և նախկինում դրանից ավել վճարված (Ավանդին մուտքագրված) տոկոսագումարները պահելով (զանձելով) Ավանդի գումարից:
- 1.7. ԵՐՐՈՐԴ ԱՆՁԸ Ավանդատուի իրավունքներ ձեռք է բերում անձը հաստատող փաստաթղթով ԲԱՆԿ անձամբ ներկայանալու և ԱՎԱՆԴԱՏՈՒՐԻ իրավունքների վրա հիմնված առաջին իսկ պահանջը ներկայացնելու պահից: Մինչ այդ ԱՎԱՆԴԱՏՈՒՐԻ կարող է օգտվել Ավանդի հաշվում իր ներդրած դրամական միջոցների ԱՎԱՆԴԱՏՈՒՐԻ իրավունքներից: ԱՎԱՆԴԱՏՈՒՐԻ մահվան դեպքում ավանդային և բանկային հաշիվներից գումարի ստացման իրավունք են ստանում նրա ժառանգները:
- 1.8. Եթե Պայմանագրով որպես ԱՎԱՆԴԱՏՈՒՐ հանդես են գալիս մեկից ավելի անձինք, Ավանդի և տոկոսագումարների վճարումները ԲԱՆԿԻ կողմից կատարվում են բոլոր Ավանդատուներից ստորագրություն վերցնելով: Ավանդատուներից մեկի կողմից գումարները ստանալու դեպքում վերջինս ԲԱՆԿԻՆ պետք է ներկայացնի մյուս Ավանդատուների կողմից տրված լիազորագիր՝ վավերացված նոտարական կարգով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1. ԲԱՆԿՆ իրավունք ունի՝
 - 2.1.1. ինքնուրույնաբար տնօրինել Ավանդի գումարը:
- 2.2. ԲԱՆԿԸ պարտավոր է՝
 - 2.2.1. պահպանել Պայմանագրի գաղտնիությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
 - 2.2.2. Պայմանագրի գործողության ժամկետը լրանալու պահից 1(Մեկ) բանկային օրվա ընթացքում Ավանդատուի պահանջով Ավանդի գումարը և հաշվեգրված տոկոսագումարները վճարել Ավանդատուին,
 - 2.2.3. երեսնօրյա պարբերականությամբ Ավանդատուին տրամադրել Ավանդային հաշվի քաղվածք բացառությամբ այն դեպքերի, եթե հաշվետու ժամանակաշրջանում Բանկը տվյալ հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել,
 - 2.2.4. տեղեկացնել Ավանդատուին Բանկի ներքին ակտերի ցանկացած այնպիսի փոփոխության մասին, որը կհանգեցնի տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխմանը, համապատասխան փոփոխության օրվանից առնվազն 15 օր առաջ:
 - 2.2.5. Պայմանագրի 2.2.3 և 2.2.4 կետերով նախատեսված տեղեկատվությունը համարվում է ԱՎԱՆԴԱՏՈՒՐԻՆ տրամադրված սույն կետով իր ընտրած հաղորդակցման միջոցով վերջինիս համար այն հասանելի դառնալու պահից, անկախ այն հանգամանքից, թե Ավանդատուն փաստացի երբ է ստանում այդ տեղեկատվությունը՝

Ավանդային հաշվից քաղվածքները, տեղեկատվական ամփոփագիրը և այլ տվյալներ տրամադրվում են ԱՎԱՆԴԱՏՈՒԻՆ ԼՂում է ԱՎԱՆԴԱՏՈՒԻՆ և ստորագրում	<input type="checkbox"/> Էլեկտրոնային եղանակով՝ ԱՎԱՆԴԱՏՈՒԻ Էլեկտրոնային հասցեին	<input type="checkbox"/> Բանկի տարածքում՝ առձեռն	<input type="checkbox"/> փոստով՝ ԱՎԱՆԴԱՏՈՒԻ հասցեով՝
	Էլեկտրոնային եղանակով՝ <input type="checkbox"/> Բանկ-հաճախորդ համակարգով	Հեռաֆաքսի՝ _____ <input type="checkbox"/> համարով	այլ եղանակով, այն է՝ <input type="checkbox"/>

2.3. ԱՎԱՆԴԱՏՈՒԻ իրավունք ունի՝

2.3.1. Բանկից պահանջել վերադարձնել Ավանդի գումարը և վճարել տոկոսներ՝ Պայմանագրով սահմանված չափերով և կարգով:

2.4. ԱՎԱՆԴԱՏՈՒԻ պարտավոր է՝

- 2.4.1. Պայմանագիրը կորցնելու, հասցեի, անվան, ազգանվան, անձնագրի փոփոխության դեպքերում անհապաղ գրավոր տեղյակ պահել Բանկին,
- 2.4.2. Ավանդը, տոկոսները կամ հաշվի քաղվածքը առձեռն ստանալու, կամ Ավանդի գումարը ավելացնելու համար ԲԱՆԿ ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով:
- 2.4.3. 2(Երկու) աշխատանքային օր առաջ ԲԱՆԿԻՆ տեղեկացնել Ավանդը Պայմանագրով սահմանված ժամկետից շուտ կանխիկ ստանալու վերաբերյալ:

3. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՄ- ՄԱԺՈՐ)

- 3.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել:

4. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊՅՄԱՆՆԵՐ

- 4.1. Ավանդի վերադարձն ապահովված է ԲԱՆԿԻՆ սեփականության իրավունքով պատկանող գույքով: Ավանդների հատուցման չափերը, կարգն ու պայմանները մանրամասն նկարագրված են Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 Հավելվածում:
- 4.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Ավանդի ներգրավման պահից և գործում է մինչև ԿՈՂՄԵՐԻ ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:
- 4.3. Պայմանագրից բխող ծանուցումները պետք է լինեն գրավոր ձևով, որոնք պետք է ուղարկվեն Պայմանագրի 5-րդ կետում նշված հասցեներով, իսկ վերջիններիս փոփոխման դեպքում՝ փոփոխված հասցեներով:
- 4.4. ԱՎԱՆԴԱՏՈՒԻ սույնով հավաստում է, որ Պայմանագիրը կնքելիս ինքը ստացել է տեղեկատվական ամփոփագիրը, ծանոթացել է ԲԱՆԿԻ կողմից ավանդների ընդունման պայմաններին, բանկային հաշվի սպասարկման սակագներին, ընդունում է դրանք և պարտավորվում կատարել դրանցով նախատեսված պահանջները:
- 4.5. Պայմանագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինչպես դատական կարգով, այնպես էլ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:
- 4.6. Պայմանագրում փոփոխություններ և(կամ) լրացումներ կարող են կատարվել նույն կարգով, ինչ կարգով որ կնքված է Պայմանագիրը:
- 4.7. Պայմանագիրը կնքված է 2(Երկու) հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՆԿ ԱՎԱՆԴԱՏՈՒ

«ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ

ՀՀ ք. Երևան 0010 Մ. Մկրտչյան փող. 12

Թ/հ No 103002102384 ՀՀ ԿԲ

Հեռախոս 54-59-64

ՀՎՀՀ 02540791

Գլխավոր տնօրեն՝

_____ Ա.Շ. Խանդկարյան

Կ. Տ.

_____ (անուն, հայրանուն ազգանուն)

Հաշվառման հասցե

_____ Անձնագրային տվյալներ _____

_____ Հեռախոս _____

_____ Սոցիալական քարտի համար _____

_____ (ստորագրություն, ձեռագրով անուն ազգանուն)